# Գևորգ Գրիգորյան ՋՈՏՏՈ

Նվիրվում է արվեստագետի ծննդյան 120-ամյակին

# Gevorg Grigorian GIOTTO

Dedicated to the 120th birthday anniversary of the artist

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

ԵՐԵՎԱՆ YEREVAN
2017

# «ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋՈՏՏՈ» ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

1918 թվականին Թիֆլիսի Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության նկարչության և քանդակագործության դպրոցում կայացավ դըպրոցի պատանի սաների ստեղծագործությունների ցուցադրությունը: Այդ ցուցահանդեսին մի շարք ստեղծագործություններով առաջին անգամ մասնակցում էր նաև Գևորգ Գրիգորյանը (Ջոտտո կեղծանունը դեռևս կիրառելի չէր), այդ թվում ներկայացնելով իր «Աղջնակ» նկարը (էջ 24): Արդեն այդ ժամանակ երիտասարդ արվեստագետի աշխատանքները գրավում են մասնագետների ուշադրությունը և նրան անդրադառնում են մամուլում՝ հատուկ առանձնացնելով այդ ցուցադրության մասնակիցների շարքում[1]: Նկարչի առաջին ցուցահանդեսից անցել է շուրջ մեկ դար և այդ «Աղջնակ»-ի ընդգրկումը արվեստագետի 120-ամյա հոբելյանին նվիրված «Գևորգ Գրիգորյան ՋՈՏՏՈ» ցուցադրությանը բավական խորհրդանշական է՝ մատնանշելով նրա անցած ճանապարհի սկիզբը:

Այս ցուցահանդեսի նպատակը Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո[2]) արվեստի համապարփակ ներկայացումն է անշուշտ: Այդուհանդերձ, արվեստի պատմության էջերում իր կայուն դիրքը զբաղեցրած, արդեն որոշակի առումով դասական դարձած արվեստագետին անդրադառնալը հղի է մի շարք մարտահրավերներով, և առաջին հերթին չկրկնվելու խնդիրն է: Գևորգ Գրիգորյան Ջոտտոն բացառություն չէ. առաջին հայացքից իր թողած գեղարվեստական ժառանգության մասին գրվել է բազմիցս, իր դերը կարևորված է հայ կերպարվեստի շրջանակներում, այդ թվում՝ որպես թիֆլիսյան դպրոցի ներկայացուցիչ, Երևանում գործում է Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարանը: Այնուամենայնիվ, մշտապես հնարավոր է բացահայտել նոր հորիզոններ, իսկ Ջոտտոյի պարագայում այդ հորիզոնները կապված են չցուցադրված կամ քիչ հայտնի ստեղծագործությունների, առաջին հերթին՝ գրաֆիկական աշխատանքների հետ: Այս շերտերում են ի հայտ գալիս Ջոտտոյի գեղագիտական մտածողության թաքնված ակունքները, այլ կերպ ասած, «լուսնի հակառակ կողմը», որը մշտապես եղել է, սակայն անտեսանելի էր մեզ, համենայն դեպս մինչ այս ցուցադրությունը:

Ցուցահանդեսը բնույթով լինելով հետահայաց՝ նպատակ ունի բացահայտելու Գևորգ Գրիգորյանին այն տեսանկյունից, որը մինչ այս շրջանառության մեջ չի եղել: Արվեստագետը իր բազմաթիվ անկյունաքարային գեղանկարչական ստեղծագործություններին զուգահեռ (որոնք ցուցադրվել են թե՛ իր կյանքի օրոք, թե՛ հետմահու) այլ արժեքավոր աշխատանքներ է կերտել շուրջ վեց տասնամյակ տևած ստեղծագործական տարբեր շրջափուլերում:

1. Խոսքը բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու հոդվածի մասին է, որ լույս էր տեսել 1918 թվականին «Կավկազսկոյե սլովո» թերթում. նա հատուկ ընդգծում է երիտասարդ Գևորգ Գրիգորյանի տաղանդը և անդրադառնում մի շարք ստեղծագործությունների:

2. Ջոտտո կեղծանվան ծագման մի քանի վարկած կա, որոնցից մեկի համաձայն Գևորգ Գրիգորյանին այդպես է անվանել Երվանդ Քոչարը՝ նրա ստեղծագործություններում տեսնելով իտալական վաղ վերածննդի վարպետ Ջոտտո դի Բոնդոնեի ոգին: Մեկ այլ վարկածի համաձայն բանաստեղծ Եղիշե Չարենցը Գևորգ Գրիգորյանի մարմինը նմանացրել է Ջոտտոյի պատկերած Քրիստոսի մարմնին՝ այդպիսով նրան անվանելով Ջոտտո Գեորգիյ: Մի առիթով էլ ինքը Գևորգ Գրիգորյանը ասել է, որ Ջոտտոյին համարում է իր մեծագույն ուսուցիչներից, և պատմել, որ հերթական ցուցադրության ժամանակ իր ինքնադիմանկարն անգամ նմանեցրել են Ջոտտոյին, ինչից հետո նկարիչ-ընկերները իրեն սկսել են այդպես անվանել:

Դիանա
*Diana*
1926

Այս նկարում Ջոտտոյի ապագա կինը՝ Դիանա Ուկլեբան, ընդամենը 16 տարեկան է: Այս առաջին պատկերից շուրջ տասը տարի անց միայն նրանք տեսնվեցին կրկին և այլևս չբաժանվեցին: Դիանան եղել է Ջոտտոյի ամենամեծ մուսան ու աջակիցը:
Երբ Ջոտտոյին հեռացրել են Նկարիչների միությունից, և նա գրեթե գումար չի վաստակել, Դիանայի շնորհիվ են ապրել, նա նկարում ու վաճառում էր, բանաստեղծությունները տպագրվում էին… լիրիկական բանաստեղծություններ, ռոմանտիկ՝ բոլորը նվիրված Ջոտտոյին:

The future wife of the artist, Diana Ukleba, is only 16 years old in this painting. Nearly a decade after this first meeting they met again and were inseparable since then. Diana was Giotto's greatest muse and supporter. When Giotto was exluded from the Artists' Union and did not earn simply any money, Diana helped them survive; she was painting, publishing poems: romantic and lyrical, dedicated to Giotto.

…Նա մեծ նկարիչ է, շատ մեծ: Ես էլ եմ նկարել, շատ նկարիչների հետ ծանոթ եմ, գիտեմ նրանց նկարները, բայց Ջոտտոն ուրիշ է, նման չէ մյուսներին: Երբ առաջին անգամ տեսա նրա նկարները, զարմանքից ապշեցի, որտեղից է գտնում այդ երանգները, կարծես մութ գույներ են, բայց այնքան պայծառ, տեսանելի: Եվ առաջին անգամ ասեցի. «Ոչ ոք այդպես չի կարող, միայն նա…»: Զգացի, որ չեմ կարող բաժանվել այդ նկարներից, նրա ստեղծողից… Եվ այդպես վաթսուն տարի, այդպես, քանի դեռ կյանք ունեմ…

*Դիանա Ուկլեբա-Գրիգորյան, 1989*

…He is a big artist, a great one. I was an artist myself, I know a lot of artists, I am familiar with their works, but Giotto is very different. When I saw his paintings for the first time, I was astonished: where does he find those tints, they seem to be dark, but so bright and visible. And I said for the first time: no one can do it that way, only him… I felt that I could not part with those paintings, with their author… so it has already been sixty years, and it will last as long as I am alive…

*Diana Ukleba-Grigorian, 1989*

Բոլոր հայաց քները դեպի երկինք
*Gazing at the Sky*
1962

Հրաժեշտ
*Farewell*
1960

Հայաց քները վեր
*Gazing up*
1962



# Գևորգ Գրիգորյան (Ջոտտո)
# ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1897 | ծնվել է Թիֆլիսում, Վրաստան |
| 1904 | կորցնում է հորը և 7 տարեկան հասակից սկսում է աշխատել տարբեր արհեստավորների մոտ |
| 1916 | նկարչությամբ տարված Գևորգ Գրիգորյանին նկատում է հայտնի բժիշկ Սեմյոն Ցոտաձեն, ով միջնորդում է, որ պատանին գեղարվեստական կրթություն ստանա |
| 1916-1921 | սովորում է Թիֆլիսի Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության նկարչության և քանդակագործության դպրոցում (ուսուցիչներ՝ Ե. Թադևոսյան, Բ. Ֆոգել, Օ. Շմերլինգ) |
| 1918 | մասնակցում է դպրոցի սաների աշխատանքների ցուցադրությանը՝ ստանալով առաջին դրական գնահատականները |
| 1921 | մեկնում է Մոսկվա և քննություններ է հանձնում Վխուտեմասում (Вхутемас, Высшие художественно-технические мастерские, Բարձրագույն գեղարվեստա-տեխնիկական արվեստանոցներ), ուր նրան ընդունում են անմիջապես երկրորդ կուրս |
| 1921-1923 | սովորում է Վխուտեմասում՝ նկարչուհի Լյուբով Պոպովայի ղեկավարությամբ, անդամակցում է «Հայարտուն» ՀԿ-ին |
| 1922 | սկսում է նկարչություն դասավանդել դպրոցներում |
| 1927 | մասնակցում է Թիֆլիսում անցկացվող վրաց նկարիչների ցուցադրությանը<br>մասնակցում է «ԽՍՀՄ ժողովուրդների արվեստը» ցուցադրությանը Մոսկվայում, որտեղ հատուկ ուշադրության է արժանանում «Ստեփան Շահումյանի դիմանկարը». այն նկատում է Անատոլի Լունաչարսկին՝ ԽՍՀՄ լուսավորության ժողկոմը |
| 1929-1930 | մասնակցում է Հայաստանում կազմակերպված ցուցադրությանը, ինչպես նաև Վրաստանի հեղափոխական նկարիչների կազմակերպության ցուցադրությանը |
| 1934 | մասնակցում է Երևանում Գեղեցիկ արվեստների թանգարանի կազմակերպած ցուցադրությանը |
| 1936 | ամուսնանում է նկարչուհի և պոետ Դիանա Ուկլեբայի հետ, ով դառնում է նրա ամենամեծ մուսան և աջակիցը ծանր ու դժնդակ տարիներին |
| 1933-1948 | ընդհատումներով մասնակցում է Թիֆլիսում կազմակերպվող գրեթե բոլոր ցուցադրություններին, միևնույն ժամանակ սկսվում են ճնշումներ նկարչի նկատմամբ, մի քանի անգամ հեռացվում է նկարիչների միությունից |
| 1948 | վերջնական հեռացվում է նկարիչների միությունից և շուրջ տասը տարի չի մասնակցում ցուցադրությունների և շատ քիչ է ստեղծագործում |
| 1957 | վերականգնվում է Վրաստանի նկարիչների միությունում մասնակցում է Հոկտեմբերյան հեղափոխության 40-ամյակին նվիրված ցուցադրությանը Թիֆլիսում |
| 1958 | մասնակցում է «Վրացական արվեստի տասնօրյակը Մոսկվայում» ցուցադրությանը, որը տեղափոխվում է Ռիգա և Տալին |
| 1962 | կնոջ՝ Դիանա Ուկլեբա-Գրիգորյանի հետ տեղափոխվում է Երևան |
| 1962-1965 | կրկին հայտնվում է մամուլի ուշադրության կենտրոնում, լույս են տեսնում մի շարք հոդվածներ (Կ. Զդանևիչ, Լ. Զինգեր, Հ. Իգիթյան, Դմ. Մոլդավսկիյ, Ն. Ստեփանյան և այլոք) |
| 1965 | կայանում է առաջին անհատական ցուցահանդեսը Հայաստանի նկարիչների միությունում, Երևան |
| 1966 | կայանում է նկարչի երկու անհատական ցուցահանդես Մոսկվայում |
| 1972 | մասնակցում է Անդրկովկասի նկարիչների ցուցադրությանը Մոսկվայում |
| 1976 | հեռանում է կյանքից Երևանում |
| 1977 | Դիանա Ուկլեբա-Գրիգորյանի ջանքերով բացվում է Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարանը, որը երկու տարի անց դառնում է Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղը |

Գևորգ Գրիգորյանի ստեղծագործությունները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում (ՀԱՊ), ՀԱՊ մասնաճյուղ Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարանում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Թբիլիսիի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի մի շարք թանգարաններում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում Հայաստանում և արտերկրում: